ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11

Հեռ. 6 – 00- 89

19.12.2012թ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է, որ համայնքի 2013թ-ի համար տեղական տուրքերի և վճարների չափերը պետք է համապատասխանեցնել եղած հնարավորություններին և տեղայնացնել այն : Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով

ՈՐՈՇՈՒՄ

1. Այգավան համայնքում 2013թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարական (տեղադրման) թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 36000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5000 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի

ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

3000 դրամ:

4) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2500դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի

համար 2500դրամ:

5) Համայնքի տարածքում

ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ ,

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 25000 դրամ,

գ) բաղնիքների (սաունաների) համար 200000 դրամ:

դ) խաղատների համար 1 մլն. դրամ

ե) շահումներով խաղերի և վիճակախաղերի համար 300000 դրամ

7) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ:

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 5000դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

8) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում՝ 2000 դրամ:

9) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար սահմանվում է՝ 5000 դրամ:

10) Աճուրդ - վաճառքների և մրցույթների համար սահմանել յուրաքանչյուր մասնակցից 1000 դրամ մուտքավճար:

11) 1.2.3. կետերի դրույքաչափերը կիրառել 0.5 գործակցով:

Ավագանու անդամներ՝ Գևորգյան Ռ,--կողմ, Էլոյան Տ.---կողմ

Հարությունյան Գ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ

Չիլինգարյան Ա. –կողմ, Սահակյան Ա.----- կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ,

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

Հեռ. 6 – 00- 89

19.12.2012թ

ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ավագանին նշում է, որ վճարի չափը սահմանելիս հարկավոր է հաշվի առնել ծնողների վճարունակությունը, համայնքի բյուջեի հնարավորությունները: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ

Սահմանել մսուր –մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարը յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամ, ամեն ամիս:

Ավագանու անդամներ՝ Գևորգյան Ռ,--կողմ, Էլոյան Տ.---կողմ

Հարությունյան Գ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ

Չիլինգարյան Ա. –կողմ, Սահակյան Ա.----- կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

Հեռ. 6 – 00- 89

19.12.2012թ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ
ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ավագանին նշում է, որ մեկ ամիս առաջ է գույքագրվել և հաշվառվել համայնքի գույքը և ցուցակները համապատասխանում են տեղում եղած գույքին: Գյուղապետարանում ստեղծված հանձնաժողովը նորից հաշվառել է համայնքի գույքը համայնքի ղեկավարի Վ. Ղուկասյանի կարգադրությամբ և նորից այն համապատասխանում է ցուցակներին ուստի՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

Որոշում

Հաստատել Այգավան համայնքի գույքի գույքացուցակները:
(հավելված թիվ 2)

Ավագանու անդամներ՝ Գևորգյան Ռ,--կողմ, Էլոյան Տ.---կողմ

Հարությունյան Գ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ

Չիլինգարյան Ա. –կողմ, Սահակյան Ա.----- կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված թիվ 2
Այգավան համայնքի ավագանու
որոշման 19.12.2012թ

Այգավանի գյուղապետարանի գույքացուցակ

ՀՀ	անվանում	քանակը	գինը	գումարը	Կապ նորոգում	մաշվածք	մնացորդ. արժեքը
1	Գ/Պ շենք	1	20421608			102108	20319500
2	Կուլտ.տուն	1	46905395			234530	46670865
3	Համակարգիչ	1	296000			59200	236800
4	Օդափոխիչ	1	140800			28160	112640
5	Համակարգիչ	1	102400			20480	81920
6	Քսերոքս	1	86400			17280	69120
7	Հեռուստացույց	1	164800			32960	131840
8	Մեղան համակարգչի	1	24000			4800	19200
9	մոնիտոր	1	85000			17000	68000
10	համակարգիչ	1	80000			16000	64000
11	Գրասեղան մեծ	1	100000			20000	80000
11	Սեղան մեծ	1	38400			7680	30720
12	Սեղան լրագրի	1	19200			3840	15360
13	աթոռ	2	90000			18000	72000
14	աթոռ պտտվող	4	15200			30400	121600
15	գրասեղան	1	28000				28000
16	Գրասեղան	2	6400			1280	5120
17	Բազմոց	1	61600			12320	49280
18	Գրասեղան	4	112000			22400	89600
19	Գրասեղան հին	1	1600			0	1600
20	Պահարան	1	56000			11200	44800
21	Պահարան հագ.	1	36000			7200	28800
22	Պատ. պահարան	1	8000			1600	6400
23	Գրապահարան	1	3000			600	2400
24	Չիրկիզվող պահ.	5	16000			3200	12800
25	Չիրկիզվող պահ	1	1600			0	1600
26	Հեռախոս սեղանի	1	8960			1792	7168
27	Աթոռ	12	76800			15360	61440
28	Աթոռ հին	4	3200			640	2560
29	Աթոռ պտտվող	1	32000			6400	25600
30	Աթոռ պտտվող մեծ	1	56000			11200	44800
31	Աթոռ	2	48000			9600	38400
32	Ավտոմեքենա	1	9000000				9000000
33	Ջահ	2	3200			640	2560
34	Աթոռ	12	200000			0	200000
35	օֆիսի բազմոց	1	150000				150000
36	գրապահարան	1	90000				90000
37	կշռատուն	1	170000			8500	161500
38	Չորանոց	1	69000			3450	65550
39	Փայտյա տնակ	1	300000			15000	285000
40	էլ. ցանց	1	1392000			69600	1322400
41	Պահեստ	1	151000			7550	143450
	Ընդամենը						

Այգավանի գյուղապետ՝ Վ.Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 14

Հեռ. 6 – 00- 89

19.12.2012թ

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով

Որոշում

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: (հավելված թիվ 1)

Ավագանու անդամներ՝ Գևորգյան Ռ,--կողմ, Էլոյան Տ.---կողմ

Հարությունյան Գ,--կողմ, Սիմոնյան Ն,--կողմ

Իլինգարյան Ա. –կողմ, Սահակյան Ա.----- կողմ

Պետրոսյան Ռ,----կողմ

ԱՅԳԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված թիվ 1
Այգավան համայնքի ավագանու
որոշման 19.12.2012թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ - 15 - / 2013թ./,
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար	1	180000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	158000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ	1	151000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	2	288000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	1	127000
Համայնք ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	122000
Քաղաքացիական աշխատանք		
Օպերատոր	1	121000
Գործավար	1	90000
Գրադարանավար	1	72000
Կոմունալ գծով պատասխանատու	1	122000
Մշակույթի տան տնօրեն	1	65000
Տեխսպասարկման անձնակազմ		
Պահակ	1	70000
Հավաքարար	1	60000
Ընդամենը՝		1786.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ